ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13.12.2012 **ՈՐՈՇՈՒՄ** 6-Ա

ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի պահանջներով, համայնքի ավագանին

Որոշեց – Հաստատել Դիտակ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

1 Համայնքի ղեկավար-160.000 դրամ

2 Աշխատակազմի քարտուղար-90.000 դրամ

3 Առաջատար մասնագետ-70.000 դրամ

4 Օպերատոր-70.000դրամ

5 Վարորդ-60.000դրամ

6 Հավաքարար-60.000 դրամ

7 Պահակ-50.000դրամ

Քվեարկությաուն - կողմ Մ. Սարգսյան

կողմ Ա. Խաչատրյան

կողմ Վ. Հովհաննիսյան

կողմ Ա. Հովհաննիսյան

Համայնքի ղեկավար Ս. Սրապոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13.12.2012 **ՈՐՈՇՈՒՄ** Ն-7

ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով համայնքի ավագանին

Որոշեց-Հաստատել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը 2013 թվականի համար

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական շինարարության) թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է

ա)մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ(յոթ հազար հինգ հարյուր)

բ) 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 դրամ

2.Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

ա)մինչև 20քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 դրամ

բ)20քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 դրամ

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար, տեղական տուրք սահմանվում է 2500դրամ

4.Օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացումը կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության համար տուրք սահմանվում է 3000 դրամ

5.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1 Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 դրամ

2 Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 դրամ

6.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 դրամ

7. 1 Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու և վարձակալական հիմունքներով տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 500դրամ:

2 Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար մասնակիցներից վճար սահմանել 3000 դրամ:

Քվեարկությաուն՝ կողմ Մ. Սարգսյան

կողմ Ա. Խաչատրյան

կողմ Վ. Հովհաննիսյան

կողմ Ա. Հովհաննիսյան

Համայնքի ղեկավար Ս. Սրապոյան